ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Մարգարիտա Հակոբյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Կիևյան 20, բն. 7, բջջ.՝ (091) 416812, էլ. հասցե՝ MHakobyan@oxfam.org.uk
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

ՕՔՍՖԱՄ հայաստանյան մասնաճյուղ, պետ. գր. համար՝ 211.060.03872
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ **ՕՔՍՖԱՄ հայաստանյան մասնաճյուղն** ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Մեր կազմակերպության լիազորված անձի՝ գյուղատնտեսական ծրագրերի պատասխանատու Արթուր Գոմկցյանի անձնագրի պատճենը (1 թերթ):
2. Մեր կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը (2 թերթ):
3. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ (4 թերթ):
4. Հետաքրքրվածության նամակը (2 թերթ):
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ (2 թերթ):

Առդիր՝ 11 թերթ:

Դիմող՝ Մարգարիտա Հակոբյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

03 մայիսի 2016թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական փաստաթղթերի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
04 » 05 2016 թ.
Մուտք N ՄԿ/5290-16

Tumanyan str. 35/11
Yerevan 0002, Armenia
Հայաստան, Երեւան 0002
Թումանյան փ. 35/11
Tel.Հեռ. (374 10) 50 84 18
Tel./Fax:
Հեռ./Ֆաքս (374 10) 53 84 18

03.05.2016թ.
Ox 38/16.

03.05.2016

Հետաքրքրվածության նամակ

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ

Հավատարիմ իր առաքելությանը, այն է՝ ապագան առանց աղքատության, Օքսֆամը սկսած 1994 թվականից, Հայաստանում իրականացնում է զարգացման տարաբնույթ ծրագրեր Հայաստանի հեռավոր սահմանամերձ գյուղական համայնքներում, ինչպես նաև ակտիվորեն ներգրավված է հանրային քաղաքականությունների ձևավորման գործընթացներում, որոնք ուղղված են երկրում աղքատության և խոցելիության հաղթահարմանը:

Համագործակցելով տասնյակից ավելի տեղական հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային և կենտրոնական կառավարման մարմինների հետ, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ Օքսֆամը առաջարկում է ծրագրային լուծումներ երկրում կայուն կենսապահովման, սոցիալական ծառայությունների հասանելիության և մարդկանց հիմնարար իրավունքների պաշտպանության համար: Հայաստանում ունենալով իր գործունեության առանձնահատուկ տիրույթը և ռազմավարական առաջնահերթությունները՝ Օքսֆամը իր գործունեության ոլորտներում նպաստում է երկրում առկա ռեսուսների առավել համակարգված և արդյունավետ օգտագործմանը՝ խթանելով նաև այլ շահագրգիռ կողմերի ռեսուրսների ներգրավումը՝ ի շահ երկրում աղքատության մակարդակի կրճատման:

Գյուղատնտեսության զարգացման, քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցության և կառավարության հաշվետվողականության խթանման ռազմավարական նպատակների իրականացման շրջանակներում ՕՔՍՖԱՄ-ն արդեն իսկ ձևավորել է շահագրգիռ քաղաքացիական կազմակերպությունների դաշինք, ի դեմս Գյուղանտեսական Դաշինքի, երկրում գյուղատնտեսության զարգացմանը նպաստող քաղաքականությունների խթանման նպատակով:

Ավելին, ՕՔՍՖԱՄ-ի գործունեության առանցքային բաղադրիչ հանդիսացող գյուղատնտեսության ոլորտում իրականացվող զարգացման ծրագրերը նպատակ ունեն աջակցել Տավուշի և Վայոց Ձորի մարզերի գյուղական աղքատ համայնքներին՝ համայնքային գյուղատնտեսական նոր սոցիալական և բիզնես մոդելների ստեղծման, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման, կայուն գյուղատնտեսական արտադրության խթանման և շուկայական նոր կապերի զարգացման ճանապարհով:

Տավուշի և Վայոց Ձորի մարզերում Օքսֆամը իրականացնում է ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր, որոնց շրջանակներում

- Վայոց Ձորի մարզում հիմնադրվել են 6 գյուղտնտեսական սպառողական կոոպերատիվներ (որոնցից 5-ը կանանց կոոպերատիվներ են), կառուցվել և շահագործման են հանձնվել միրգ

FOUNDED IN 1942, Oxfam works with poor people regardless of race or religion in their struggle against hunger, disease, exploitation and poverty.

Honorary Officers: Chair: **Joel Joffe,** Vice Chair: **Dr. Jeremy Swift,** Hon Treasurer: **Frank Kirwan,** Hon Secretary: **Lesley Ridyard**, Director: **Barbara Stocking.**
Oxfam United Kingdom and Ireland is a member of Oxfam International.
A company limited by guarantee and registered in London No 612172. Registered Office 274 Banbury Road, Oxford OX2 7DZ. Registered charity No 202918

և բանջարեղենի մթերման սառնարանային 4 համալիրներ, կառուցվել են 6 ջերմոցային տնտեսություններ

- Տավուշի մարզում հիմնադրվել են 18 գյուղտնտեսական սպառողական կոոպերատիվներ (որոնցից 3-ը կանանց կոոպերատիվներ են), կառուցվել և շահագործման են հանձնվել միրգ և բանջարեղենի մթերման սառնարանային 4 համալիրներ, կառուցվել են 35 ջերմոցային տնտեսություններ: Այրում և Սնքար համայնքներում հիմնադրվել են մրգի և հատապտուղների վերամշակման արտադրամասեր:

Օքսֆամի «Հարավային Կովկասում տարածաշրջանային պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարության և փոքրածավալ արտադրության միջոցով» տարածաշրջանային քառամյա ծրագրի շրջանակներում, կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ, որի շրջանակներում համատեղ մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ գյուղատնտեսության 2016-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարությունը: Սույն համագործակցության շրջանակներում կազմակերպվում է նաև ամենամյա "Գյուղատնտեսության ոլորտի կին հերոս մրցանակաբաշխությունը":

Հաշվի առնելով վերահիշյալը՝ Օքսֆամ կազմակերպությունը սույն նամակով հայտնում է իր հետաքրքրությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

Համոզված ենք, որ Օքսֆամի ոլորտային փորձառությունը, գյուղատնտեսության ոլորտում իրականացրած ծրագրերը և գործընկերների լայն ցանցը մեծապես կնպաստեն նորաստեղծ հասարակական խորհրդի կայացմանը և արդյունավետ գործունեությանը:

Հարգանքով՝

Օքսֆամի հայաստանյան գրասենյակի տնօրեն՝

Մարգարիտա Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ "ՌԵԳԻՍՏՐ"

ՎԿԱՅԱԿԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ, ՀԻՄՆԱՐԿԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 25-ի N 670 որոշմամբ

ՎԿԱՅԱԿԱՆ

01Բ 002034

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ,
ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

,,ՕՔՍՖԱՄ,,ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

(տրանշնացված արտորաբաժանման, հիմնարկի անվանումը)

Հաշվառված է պետական ռեգիստրի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ կողմից
(արտորաբաժանման անվանումը)

Հաշվառման համարը 211.060.03872

Հաշվառման տարին, ամիսը, ամսաթիվը 23.03.06թ.

Ծածկագիրը (կոդը) 39188652

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ. Տ.

«23» մարտի 2006 թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 25-ի N 670 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 001

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ,
ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Վկայական 01Բ 002034

Անվանումը ,,ՕՔՍՖԱՄ,,ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հիմնադրի անվանումը ,,ՕՔՍՖԱՄ,,ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը 375078, ք. Երևան, Մարգարյան փող. 12շ
Երևանի Ֆիզիկայի ինստիտուտ, Քութեշ 2, բն.5

Այլ տեղեկություններ Ղեկավար՝ ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ
Անձ. ԱԳ 0309501 տրվ. 18.05.04թ. 012 կողմից
Բն.վայրը՝ ք.Երևան, Կիևյան 20շ.բն.7
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության
13.11.98թ. թիվ 1005 հրամանով, նախարարի
22.12.00թ. թիվ 1288 հրամանով

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«23» մարտի 2006 թ.

Ամփոփ տեղեկանք

վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Օքսֆամը Հայաստանում Տնտեսական արդարության ծրագիր (ՏԱԾ)/Պարենային անվտանգության ծրագիր

2000 թվականից ի վեր Օքսֆամ Տնտեսական արդարության (ՏԱ) ծրագիրը Հայաստանում պայքարում է անհավասարության դեմ՝ նպաստելով փոքր ֆերմերների շրջանում կայուն ապրելակերպին: Ծրագիրն աջակցում է ֆերմերներին՝ ձեռնարկել կոլեկտիվ գործողություններ գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով. այդ ամենն օգնում է նրանց կրճատել իրենց անձնական ծախսերը և մատչում ունենալ ծառայությունների ավելի լայն շրջանակների և շուկաների: Կոլեկտիվ մարկետինգը և արդյունավետ բանակցելու կարողությունը փոքր ֆերմերների համար հանգեցրել են ավելի լավ գների և զգալիորեն բարելավել նրանց ապրելակերպը:

Ծրագրի մոտեցումները

Ծրագրի մոդելի արդյունավետ կիրառումը ՝Օքսֆամի գյուղական բիզնեսի և հասարակական ձեռնարկության նոր մոդելը հիմնված է փոքր համայնքի գյուղատնտեսական բիզնեսի ենթակառույցների զարգացման վրա, որոնք պատկանում և ղեկավարվում են կոոպերատիվների կողմից: Նրանց գործառնություններից առաջացած եկամուտը կրկին ներդրվում է հասարակական հիմնադրամում, որն օգտագործվում է հասարակական ծրագրերի համար, որոնցից օգտվում են հասարակության ավելի լայն շրջանակներ:

Ազգային մակարդակով ազդեցությունը ՝Օքսֆամն աջակցում է ծրագրերին տեղական մակարդակով և զարգացնում դրանց ազդեցությունը համայնքային մակարդակից ազգային մակարդակի՝ մասնակցային և շարունակական ազգային շահերի պաշտպանության և քարոզչության միջոցով: Ազգային մակարդակով ազդեցությունը նպատակ ունի ստեղծել ավելի նպաստավոր կառուցակարգային և իրավական միջավայր՝ բարելավելու փոքր ֆերմերությունը Հայաստանում:

Բազմակի շահագրգիռ կողմերի ներգրավումը ՝2011թ. Օքսֆամի ՏԱ ծրագիրը նախաձեռնել է բազմակի շահագրգիռ կողմերի Գյուղատնտեսական դաշինքը (ԳԴ), գյուղատնտեսության ազգային հարթակ՝ տասնհինգ միջազգային և տեղական կազմակերպություններով, որոնք հանդիսանում են հիմնական դերակատարը Հայաստանում Գյուղատնտեսության զարգացման հատվածում: Դաշինքը հանդիսանում է բազմակի շահագրգիռ կողմերի հարթակ համատեղ շահերի պաշտպանության և լոբբինգի աշխատանքների համար ազգային մակարդակով հանրային քաղաքականության համար, որոնք երաշխավորում են պարենային առավել բարձր անվտանգություն, եղանակային փոփոխություններին դիմակայում և սննդակարգի բարելավում ամբողջ երկրում՝ խթանելով կայուն և ճկուն գյուղատնտեսությունը և նպաստելով լավագույն ծրագրային փորձի կիրառմամբ՝ կապված Գյուղատնտեսական հատվածում փոքր գյուղատնտեսության զարգացման և աղքատության, ինչպես նաև գենդերային հավասարության քաղաքաքանության և ռազմավարության հետ:

'Դաշինքը' ավելի դյուրին է դրձնում տեղեկատվության մասշտաբային կանոնավոր փոխանակումը, անդամ կազմակերպությունների շրջանում վերլուծումը և փորձը և հնարավոր դարձնում ընդհանուր դիրքորոշումների զարգացումը՝ հաղորդակցվելու և երկխոսություն սկսելու գործընկերների և ազգային շահագրգիռ կողմերի միջև: Դաշինքը համախմբում է ՔՀԿ-ներին, կառավարությանը և հետազոտական կառույցներին՝ Հայաստանում գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ընդհանուր տեսլականով: Դաշինքն սերտորեն համագործակցում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հետ: 2013թ. Գյուղատնտեսության նախարարության և Գյուղատնտեսական դաշինքի միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագիրը երաշխավորում է սերտ համագործակցություն և գործընկերություն քաղաքացիական հասարակության և պետական պաշտոնյաների միջև՝ աղքատությանն ուղղված կառուցողական քաղաքականության համար ազգային և մարզային մակարդակներով:

<u>Գենդերային իրավահավասարության ռազմավարություն</u> ՝ ՏԱ ծրագիրը խթանում է կանանց տնտեսական հզորացումը և առաջնորդելու կարողությունը Հայաստանի հեռավոր շրջաններում: Հայ կանայք դիմայում են շատ արգելքների՝ գյուղատնտեսական արտադրության և մարկետինգային ցանցերում հավասար մասնակցություն ցուցաբերելու համար: Օքսֆամն աջակցում է կանանց գյուղատնտեսական բիզնեսի զարգացմանը և կառուցում նրանց առաջնորդելու հմտությունները՝ ներգրավելով նրանց գյուղատնտեսական կոոպերատիվ կառավարման կառույցների և վերապատրաստման ծրագրերի մեջ, ինչպես նաև ներգրավելով կին ֆերմերների որոշակի գենդերային զգայուն արժեքային շղթաների մեջ: Օքսֆամը նաև աշխատում է փոխել Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականությունը՝ դարձնելու այն առավել գենդերային զգայուն: Գյուղատնտեսական դաշինքը ճանաչում է կանանց անտեսված դերը գյուղատնտեսության մեջ և աջակցում է կանանց ձայների ինտեգրմանը արդյունավետ քաղաքականություններ և ռազմավարություններ ձևավորելու գործընթացում:

<u>Մասնակցային քաղաքականության ձևավորումը</u> ՝Օքսֆամը, համագործակցելով Գյուղատնտեսական դաշինքի և Գյուղատնտեսության նախարարության հետ, ներգրավված է Կայուն գյուղատնտեսական զարգացման (ԿԳԶ) նոր ազգային ռազմավարության զարգացման մեջ 2015-25թթ. Համար: Օքսֆամը հեշտացրել է տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությունը ռազմավարության գործընթացի ձևավորման մեջ համայնքային մակարդակից ազգային մակարդակի: Վերջինս մշակվել է հիմնական շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքում, այդ թվում՝ անմիջական օգտառուների, ֆերմերների և նրանց կոոպերատիվների, մասնավոր հատվածի և քաղաքանությունն մշակողների: Մասնակցային ազգային քաղաքանության ձևավորման այս մոդելը մեծապես ընդունվել է Գյուղատնտեսության նախարար Արմեն Հարությունյանի կողմից, ով ռազմավարության նախագծի ներկայացման ժամանակ հաստատեց՝

"Նոր ռազմավարությունը նպատակ ունի ստեղծել նպաստավոր պայմաններ գյուղատնտեսական արտադրողների համար, օգնել արդիականացնել այս հատվածը և բարձրացնել պարենային անվտանգության մակարդակը: Քաղաքականության

փաստաթուղթը հատուկ ուշադրության է արժանացնում այս հատվածում ռիսկերի կրճատմանը, ներկայացնում ուղիներ ապահովագրության և ավելի լավ պայմաններով վարկավորման համար: Ռազմավարությունը նաև բացառում է գենդերային խտրականությունը գյուղատնտեսության ոլորտում”:

<u>Գենդերային զգայուն քաղաքականություններ</u> ՝Որպես գենդերային իրավահավասարության աշխատանքների մաս՝ ՏԱ ծրագրի շրջանակներում Օքսֆամը ստեղծել է ուղեցույց Գենդերային վերլուծության և իրավահավասարության վերաբերյալ, որը պաշտոնապես ընդունվել է Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կողմից: Ուղեցույցը, որն այժմ պարտադիր է 10 մարզերի համար, առաջին կառավարական գենդերնային զգայուն փաստաթուղթն է, որը կանանց ապահովում է մատչում վարկային և ավելի լայն գյուղատնտեսական և հասարակական ծառայությունների, արդյունավետ կերպով իրականացվում և հնարավոր է դարձնում նրանց հզորացումը:

ՏԱ ծրագիրը նպատակ ունի ընդլայնել մարկետինգային հնարավորությունները փոքր ֆերմերների համար, ինչպես նաև հնարավորություն ստեղծում միավորել համագործակցության հայեցակարգը՝ նպատակ ունենալով համախմբել, համագործակցել և համակարգել այնպես, որ հնարավոր լինի տնտեսել արտադրության ծավալները մեծացնելով և կազմակերպել մատակարարումներն առավել արդյունավետորեն:
Այս նոր գյուղական գյուղատնտեսական բիզնեսների ենթակառուցվածքները, որոնք կառավարվում են նոր ֆերմերային կոոպերատիվների կողմից, նպատակ ունեն բարելավելու տեղական արտադրությունը՝ ավելացնելով արժեք ֆերմերների արտադրանքին և ուժեղացնելով փոքր ֆերմերների դիրքը ողջ գյուղատնտեսական արժեքային շղթայի մեջ:
ՕՔՍՖԱՄ հասարակական կազմակերպության մոդելները հզորացնում են փոքր ֆերմերներին, հատկապես կանանց՝ աճեցնելու իրենց սեփական սնունդը, ստեղծելու կոոպերատիվներ, վաճառելու իրենց բերքը և ստանալու ավելի լավ գին իրենց արտադրանքի համար: Օքսֆամի հասարակական կազմակերպությունը ավելացնում է եկամուտը և համայնքների ճկունությունը գյուղատնտեսական ռիսկերի նկատմամբ, որոնք կապված են եղանակային վտանգների հետ, կյանքի է կոչում սոցիալական ծրագրերն, այդպիսով նվազեցնելով համայնքների խոցելիությունը:
ՏԱԾ-ը իր նախագծերի միջոցով նաև ինտեգրում է Հետազոտման և զարգացման բաղադրիչներն այնպես, որ փոքր ֆերմերներին ապահովի ուսուցմամբ Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղի Տարածքային ֆերմերական դպրոցում: Տարածքային ֆերմերական դպրոցը (ՏՖԴ) ցուցադրական/փորձնական ջերմոցներով և դրսային դաշտային հողերով, հատուկ վերապատրաստման ծրագրերով կազմակերպել և վարել է՝ պետական Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնի (կատարելագործման ծառայությունը Տավուշի մարզում) և Բանջարեաբոստանային մշակաբույսերի պետական գիտահետազոտական կենտրոնի հետ համագործակցությամբ, կենտրոնանում են փոքր ֆերմեր կանանց և տղամարդկանց կարողությունների զարգացման վրա՝ նոր գյուղատնտեսական և հարմարվողականության բարձրացման տեխնիկայով:

Զեռնարկատիրատիրության զարգացման մոդելը գյուղական տարածքներում մրգերի և հատապտուղների մշակման գործարանում:

Օքսֆամը նաև խթանում է գյուղական բիզնես ձեռնարկությունների զարգացումը համայնքային մրգերի մշակման գործարանի ձևով Այրումի համայնքում, որը ստանում է հումքը (անտառային մրգեր/հատապտուղներ) աղքատ ընտանիքներից/գյուղացիներից: Բոլոր փոքր ֆերմերները, գյուղատնտեսական կոոպերատիվների անդամները մատչում ունեն վարկերի, որոնք տրամադրվում են Օքսֆամի հետ համագործակցող Միկրոֆինանսավորման կառույցի կողմից:
Ձեռնարկատիրության զարգացման ծրագրի շրջանակներում Օքսֆամը 2014թ. հիմնել է մրգերի և հատապտուղների մշակման արտադրամաս, որը գտնվում է Տավուշի մարզի Այրում համայնքում:
Այրումի մրգերի և հատապտուղների վերամշակման գործարանը նորարարական և բացառիկ համայնքային բիզնես մոդել է, որը կառավարվում և ղեկավարվում է տեղական գյուղատնտեսական կոոպերատիվի կողմից: Այն հիմնադրվել է Օքֆամի 2013-2014թթ. Ձեռնարկատիրության զարգացման ծրագրի շրջանակներում, որն աջակցում է սահմանամերձ շրջանների փոքր ֆերմերներին՝ հիմնելու և վարելու համայնքային բիզնես ձեռնարկություն: Որպես ձեռնարկության սոցիալական բաղադրիչ՝ "Լճկաձոր" կոոպերատիվը պետք է ուղղի իր շահույթի մի մասը համայնքի խնդիրների լուծմանը:
Արտադրամասը կապահովի ավելի քան 60 աշխատատեղ հատկապես համայնքի կանանց համար, ինչպես նաև կայուն մթերման շուկա Այրում համայնքին հարակից 10 գյուղերի ավելի քան 400 բնակչի համար: Արտադրամասում պլանավորվում է վերամշակել տարեկան մինչև 500 տոննա միրգ և հատապտուղ (ջեմեր, մուրաբաներ, կոմպոտներ):
2011թ. Սկսած՝ Օքսֆամը ներդրել է ավելի քան 100 միլիոն ՀՀ դրամ Այրումի համայնքի ենթակառուցվածքների վերակառուցման համար, ինչպես օրինակ համայնքի սառը պահեստավորման հիմնարկությունը ֆերմերների թարմ արտադրանքի համար, արտադրամասի շենքի վերակառուցումը և գործարկումը:
Նույնատիպ արտադրամաս կգործարկվի Տավուշ մարզի Սևքար համայնքում 2016 թ., որի հիմնադրման համար ներդրվել է ավելի քան 70 միլիոն ՀՀ դրամ:

Արդյունավետ կիրառումը և բազմակի շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը

Օքսֆամը Հայաստանում Այրումը տեսնում է որպես կիրառելի մոդել Հայաստանում գյուղատնտեսության զարգացման համար: Մենք խթանել ենք այս մոդելը երկրում հիմնական շահագրգիռ կողմերի շրջանակներում և փորձում ենք ապահովել ավելի շատ ներդրումներ Այրումի մշակման արտադրամասի համար, ինչպես նաև լոբբինգ ենք անում և նպաստում ենք Հայաստանում նմանատիպ ձեռնարկությունների ստեղծմանը:
Արդյունավետ կիրառման մեր ջանքերի արդյունքում մի քանի կազմակերպություններ նպաստել են Այրումի մշակման արտադրամասին, այդ թվում՝
- Օրանժ հիմնադրամը, Ֆրանսիական G2iA (Հայկական միջազգային միջ-մասնագիտական խումբ) ընկերությունը և Ֆրանսիայի Rhône-Alpes շրջանը, որը տրամադրել է մոտավորապես 25 000 ԱՄՆ դոլար Այրումի վերամշակման արտադրամասին:
- ՔԵՅՐ Ինթերնեյշնլը Կովկասում /CARE International in the Caucasus/ իր համատեղ ծրագրի շրջանակներում արտադրամասին է տրամադրել է 24,700 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով սարքավորումներ:

Վերլուծություն

վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ԳՆ) մշակում և իրականացնում է գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառում պետական քաղաքականությունը: Հիմնական ուղղություններից, որոնցով նախորդ 3 տարիների ընթացքում կատարվել են զգալի աշխատանքներ և եղել են նշանակալի ձեռքբերումներ, կարելի է նշել հետևյալները.

- Հայաստանի Հանրապետության ագրարային ու պարենային ապահովությանն ուղղված աշխատանքները,
- գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանն ու զարգացմանը նպաստող գործընթացները,
- գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն ուղղված աջակցությունը,
- գիտատեխնիկական քաղաքականության և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացումը,
- փոքր ֆերմերներին գյուղատնտեսական ներդրանքի՝ պարարտանյութերի և վառելիքի տրամադրումը՝ մատչելի (սուբսիդավորված) պայմաններով,
- Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանը միտված՝ բնագավառը կարգավորող իրավական ակտերի մշակումը և հաստատումը:

Հատկապես պետք է նշել ՀՀ ԳՆ-ի պատրաստակամությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ քաղաքականությունների/ռազմավարությունների մասնակցային մշակման գործում: Այդ համագործակցության հաջող արդյունքներից են 2015 թվականի վերջում ընդունված Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության 2016-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության նախագիծը (որն արդեն շրջանառության մեջ է դրվել), որն առաջին անգամ մշակվել է գենդերային ուղղորդմամբ: Բացի այդ, ՀՀ ԳՆ-ի նախաձեռնությամբ և առաջնորդությամբ ներկայումս միջազգային և տեղական շահագրգիռ կազմակերպությունների հետ միասին մշակվում են գյուղատնտեսության ապահովագրության փորձնական մոդելները:

Վերը նշված բարդ և լայնածավալ աշխատանքների ու ձեռքբերումների հետ մեկտեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև հետագա բարելավման և ուշադրության կարիք ունեցող հետևյալ ոլորտները/աշխատանքները.

- գյուղատնտեսական կոոպերատիվների վերաբերյալ օրենսդրության կիրարկման, կոոպերատիվների ինստիտուցիոնալ և տնտեսական կարողությունների զարգացման և խթանմանն ուղղված միջոցառումներ/աշխատանքներ

- գյուղատնտեսության ապահովագրության հիմնարար համակարգի ներդրում,
- Գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքի ընդունում,
- գյուղական համայնքներում տեղական գյուղմթերք արտադրողներին, այդ թվում՝ կոոպերատիվներին պետական աջակցության գործընթացի՝ հատկապես մատչելի վարկերի տրամադրման գործընթացի պարզեցում և հասանելիության բարձրացում,
- տեղական գյուղատնտեսական մթերքներ արտադրողներին օժանդակելուն միտված մարքետինգային կարողությունների (նպաստող կառույցների, լոգիստիկ համակարգի) զարգացմանն աջակցություն: